ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԱՐԻՆԵ ՔԱՐ ՈՒՈՇ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 49-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հաշվի առնելով, որ դիմողի գործի առնչությամբ 08.04.2011թ. կայացված որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքը, բեկանել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 04.02.2011թ. թիվ ՍԴ/0961/02/10 վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, եւ, ըստ այդմ, ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործով ըստ էության նոր վճիռ կայացնելուց հետո դեռեւս պահպանվում է վերաքննության եւ վճռաբեկության կարգով բողոքարկման ձեւով դատական պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորությունը, դիմողը ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի պահանջներին համապատասխան չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ, հետեւաբար, **իրավասու չէ դիմել սահմանադրական դատարան:**

2. Ինչպես հեռախոսային խոսակցությունների եւ այլ հաղորդակցության գաղտնիության պաշտպանության օրենսդրական երաշխիքների, այնպես էլ համապատասխան միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքն իր էությամբ վերաբերում է ֆիզիկական անձանց եւ կազմում է ֆիզիկական անձանց կյանքի անձեռնմխելիության իրավունքի բաղկացուցիչ մասը, մեկնաբանվում է որպես անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի տարր, ինչպես նաեւ անձի իրավական կարգավիճակի բաղկացուցիչ: Հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը կրող սուբյեկտը ֆիզիկական անձն է, եւ,

ըստ այդմ, այդ իրավունքի խախտման դեմ պաշտպանություն կարող է հայցել այն ֆիզիկական անձը, ում հեռախոսային խոսակցության իրավունքն անմիջականորեն խախտվել է:

Դիմողն ունենալով իրավաբանական անձի կարգավիճակ՝ չի հանդիսանում Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը կրող սուբյեկտ: Իրավաբանական անձը՝ պայմանավորված իր եւ իր գործունեության բնույթով, կարող է հանդես գալ կորպորատիվ կամ/եւ ծառայողական գաղտնիքի պաշտպանությամբ, ինչը, սակայն, չի հանդիսացել դատարաններում քննված գործի առարկա: Հետեւաբար, դիմողը, չլինելով հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը կրող սուբյեկտ, իրավասու չէ դիմել սահմանադրական դատարան՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքի խախտման առնչությամբ:

3. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի պահանջներով՝ «Արինե Քար Ուոշ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 մարտի 2012 թվականի
ՍԴԱՈ -16